

կան, 1130 մարոնիներ և միայն 562 հոգի հար, կար, նաև աննշան թուով հրէաներ, իսկ կղզիաբնակ անգլիացիները— վարչական և զինւորական ծառայողներ—215 հոգի: Յունական գերիշխանութիւնը արտայայտուած է ոչ միայն եկեղեցիների և վանքերի թուով (607 եկ. և 94 վ.), այլև հրատարակուող թերթերի քանակութեամբ. Կիպրոսում բացի պաշտօնական երեք-լեզուեան (անգլիերէն-յունարէն-թիւրքերէն) թերթից լոյս են տեսնում 8 յունական և 1 թիւրքերէն թերթեր:

Հայերը, որոնք երբեմն (Լուսինեանների) ժամանակ նշանաւոր դեր են կատարել այդ կղզում, այժմ ողորմելի դիրք ունեն այդտեղ. հայերի ազգային հաստատութիւններն են՝ կղզու մայրաքաղաք Նիկոսիայում (17 հազ. բնակիչ) մի եկեղեցի և քաղաքից հիւսիս-արեւելեան ուղղութեամբ 5-6 ժամ հեռաւորութեան վրայ Ս. Մակարի վանքը, մօտ 2¹/₂ անգլիական սկր հողով: Բացի այդ, եօթ տարի է որ Նիկոսիայում գոյութիւն ունի Ազգային Կրթարան-Որբանոցը մօտ 32 աշակերտներով: Պ. Բակուրանի գրեթէ քառասուն տարեկան շատ բազմակողմանի և բովանդակալի կերպով է կազմուած և ամփոփ գաղափար է տալիս այդ կղզու թէ անցեալի և թէ ներկայի մասին. արտօս որ գէթ մի փոքրիկ քարտէզ չի կցուած նրան:

Լ. Ս.

Գ. Ալվերդեան՝ «Հայ Առաքելներ». հրատարակուած խմբագրութեամբ Վաղարշապատի Հանգիսի. Ա-ԺԱ, 527 երես, 1903 թ., Թիֆլիս, գինն է?

Մեզ թուած է թէ Գ. Ալվերդեան սրանից կէս դար առաջ, երբ ազգագրական գիտութիւնը դեռ նոր էր ծնունդ առնում, անհամեմատ աւելի լաւ էր հասկացել ազգագրական նիւթերի կարևորութիւնը և նրանց հրատարակելու ձևը, քան «Ազգագրական Հանդէս»-ի խմբագրութիւնը, որի գեղեցիկ ապացոյցը «Գուճանքի» հրատարակութիւնն է:

Խմբագրութիւնը բոլորովին անհիմն կերպով աշուղներին իրանց երգերով բաժանել է բարբառների—Արարատեան, Գանձակի, Թիֆլիսի և Հաշտարխանի: Այդ մասին մենք խօսելու ենք մի այլ անգամ, ուստի և անցնում ենք հրատարակութեան այլ պակասութիւններին, որոնք միայն ապացուցանում են վերևում մեր ասածը: Այսպէս 1) Ջահիլ-Օղլան աշուղի մասին մի ծանօթութեան մէջ ասուած է, որ Ջահիլ և Ջահէլ-Օղլանները հաւանօրէն տարբեր անձինք են, առանց մտածելու, որ Ջահիլ և Ջահէլ բառերը նոյնն են: 2) Որ նա հաշտարխանցի

է, որովհետեւ նրա մի-երկու երգերի մէջ այդ բարբառի հետ-
քեր կան: Մինչդեռ եթէ բաց անենք նոյն գրքի 494 երեսը,
կը գտնենք Գ. Ախվերդեանի ծանօթութիւնը, թէ «Ջահիլ-Օղլա-
նը Մոզդոկում բազազ էր, ինքը Թիֆլիսի ծնունդ էր, խաւազ
(կօշկակար) էստատէ Դրիկիւօի տղան էր»: Պարզ է, որ Թիֆ-
լիսեցի աշուղ Ջահիլ-Օղլանը բնակուելով Մոզդոկում, ուր, ինչ-
պէս և հիւսիսային Կովկասի մի շարք քաղաքներում, խօսում
են Հաշտարխանի բարբառով, սովորել է այդ բարբառը,
և իր երգերի մէջ երևում են երկու բարբառների հետքերը:
3) 367 երեսում մի երգի մէջ կայ հետեւալ տողը. «Ոչ
ընդունիմ և ոչ հաճիմ, թէ որ զաշխարհ առնէ Դօն»: Այդ առ-
թիւ նոյն երեսում կայ այս ծանօթութիւնը. «Դուցէ Դանուբ
գետի մասին է խօսքը»: Դօն բառը աշուղին պէտք է եկել ոտի
համար, որովհետեւ յանգն այդ է պահանջում: Երգի մէջ ոչինչ
չկայ, որ Դանուբի (Дунай) մասին լինի խօսքը: 4) 385 երեսում
մի երգի մէջ կայ «բանդիւան» բառը: Այդ ոտանաւորի մէջ,
ինչպէս աշուղները սովորութիւն ունեն, ասողի անունը չկայ,
որ և առիթ է տուել խմբագրութեան ասելու, որ «բանդիւան»
բառի վրայ հիմնուած մի թիւրիմացութիւն է, թէ երգը Իվանէ
աշուղին է վերագրուած: Եթէ «բանդիւան» բառը յատուկ է
միայն աշուղ Իվանէին, որպէս կարծում է խմբագրութիւնը,
հապա ուրեմն դա ամենալաւ ապացոյցն է, որ երգը Իվանէինն
է և ոչ ուրիշինը:

Առանձին իմաստ չկայ երգերը բարբառների բաժանել: Գրե-
քում չի տուած աշուղների թէկուզ համառօտ կենսագրութիւն և
ժամանակագրութիւն. չկան աշուղների, երգերի ցանկերը. չկայ
երգերի ըստ բովանդակութեան ցանկ. չէ ասուած, թէ որ
երգերն են նոր տպագրութեամբ լոյս տեսնում. ոչ մի տեսու-
թիւն չկայ, որ բացատրէր աշուղների արժէքը և ցոյց տար, թէ
ինչ բան աւելի է գրաւել հայ աշուղին: Մի խօսքով կարելի է
ասել, որ խմբագրութիւնն ստացել է «...ձեռագիր ժողովածու-
ների մի կոյտ... խմբագրելու...», սակայն առանձին հոգ չի
տարել որոշ կարգ ու սխտեմ մտցնելու այդ կոյտի մէջ: Գրքի
գլխաւոր արժանիքը բառարանն է, որ կցուած է վերջում:

Ա. Վ. Ղ.

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԻՔՆՐ

- 1) Յովհաննէս Թումանեան՝ «Բանաստեղծութիւններ», Թիֆ-
լիս, 1903, գ. 3 բուրլի.